Քիարա Լուչեի Սուրբ Ծննդյան նվերը

Տեսարան Ա

Հիվանդանոցի այգում Քիարան ուղեկցում է Լուիզային թևանցուկ, Լուիզայի դեմքին ցավի արտահայտություն կա, իսկ Քիարան թեև սարսափելի ցավեր ունի, բայց նկատելի է, որ զսպում է իրեն: Քիարայի մայրը նստած է քիչ հեռու՝ նստարանին, և հետևում է զբոսնող աղջիկներին:

Քիարա.
-Դու մի քանի օրից կառողջանաս, Լուի՛զա, և Սուրբ Ծննդյան տոնն արդեն կդիմավորես ձեր տանը, ա՛յ կտեսնես: Բոլորդ կլինեք միասին՝ հայրիկդ, մայրիկդ, քույրդ և եղբայրդ, ազգականներդ: Բայց նախ Սուրբ Ծննդյան նախօրեին ամբողջ օրը մի լա՛վ կխաղաք դրսում, սահնակ կքշեք ձեր քաղաքի սահադաշտում, որտեղ կհնչի մի գեղեցիկ երաժշտություն, դու ի՞նչ երաժշտություն ես սիրում, Լուի՛զա:
Լուիզա.
-Չգիտեմ, այս պահին միտքս չի գալիս, այս անտանելի ցավը չի թողնում, որ հիշեմ: Գուցե…գուցե…այն անգլերեն երգը զանգակների մասին, ինչպե՞ս էր, այո, հիշեցի, Jingle, bells!:
Քիարա. *Երգում է*
- Jingle, bells! Jingle, bells, Jingle all the way…!

Լուիզան սկսում է ինքն էլ երգել՝ արցունքների միջից և ժպտում է:

Քիարա.
-Այո՛, շատ լավն է, ե՛ս էլ շատ եմ սիրում այդ երգը, պատկերացնում եմ, թե ի՜նչ գեղեցիկ կլինի սահադաշտում՝ այդ երգի հնչյունների ներքո, բոլորն ուրա՜խ են և սահում են գրեթե պարելով, տղաներն ու աղջիկներն իրար ձեռք բռնած, կատակում են և քննարկում, թե ինչպես են անկացնելու հանսգտյան տոնական օրերը: Մի լավ սահելուց հետո կզբոսնեք և ձնագնդի կխաղաք այգում, որտեղ տեսարանը կլինի շա՛տ ավելի գեղեցիկ՝ եղևնիները ձյունով ծածկված՝ արծաթի պես փայլում են, մանավանդ, երեկոյան անդրադարձնելով բարձր լապտերների լույսերը: Արդեն մութ է, ծառերի վերևում սկսում է մեղմ գլորվել լուսինը, որ Սուրբ Ծննդյան երեկոյան մի բարի տատիկի դեմք ունի՝ ճիշտ հեքիաթների բարի փերիների նման: Դուք ընկերներով ուրախ ձնագնդի եք խաղում, ահա՛ մեկը հարմարեցնում և ձնագնդիով հարվածում է ուղիղ ծոծրակիդ. հա՜, հա՜, հա՜ *(այստեղ Քիարան բարձր ծիծաղում է, բայց դեմքը ծամածռվում է զսպված ցավից, Լուիզան ևս սկսում է ակամայից ծիծաղել)*: Գիտե՛մ, ցավում է, Լուիզա, բայց պետք է մի փոքր զբոսնեինք… հիմա կարող ենք նստել այս նստարանին, ահա՛: *(նստում են մի տեղ):* Հանկարծ մեղմ ու խորհրդավոր

թավ ձայնով հնչում են եկեղեցու զանգերը, որոնք բոլորին հրավիրում են Ճրագալույցի Սուրբ Պատարագին: Ընկերներիդ ասում ես՝ գնացի՜նք, և բոլորդ՝ ուրախ, մեկ մարդու նման, թողնում եք ձնագնդիները և վազում դեպի եկեղեցի, մեջքդ այլևս չի ցավում, պատկերացու՞մ ես, էլ ցավ չկա՛, վե՛րջ, կամ եթե կա էլ, դա քեզ չի հետաքրքրում այլևս, չէ՞ որ նորածին Հիսուս Մանուկն է սպասում քեզ եկեղեցում: Եվ դու շտապում ես ինքնամոռաց, վազում ես դեպի լույսերով ողողված եկեղեցին, մտնում ես շնչակտուր, հասնում ես մսուրին և տեսնելով Հիսուս Մանկանը՝ մոռանում ես քո բոլո՛ր ցավերը:

Լուիզա.
-Հենց Հիսուսին տեսնեմ, կլավանամ, չէ՞, Քիարա՛:
Քիարա.
-Դե իհա՛րկե, դու արդեն լավ կլինես մինչև՛ Նրան հասնելը, չէ՞որ Հիսուս գիտի, թե մեզ ինչ է պետք, նախքան, որ մենք նրանից մի բան խնդրենք: Դու կարդում ես, չէ՞ Ավետարանները: Հիսուս Ի՛նքն է ասում դա: Ես ամեն օր աղոթում եմ քեզ համար և Հիսուսին խնդրում, որ քեզ բուժի մինչև Սուրբ Ծնունդ, և ես գիտեմ, որ դու կբուժվես, Լուիզա:
Լուիզա.
-Ես վախենում եմ… այո՛, դու աղոթում ես, քահանան էլ ասաց, որ աղոթում է ինձ համար, ես հավատում եմ, որ Հիսուս կարող է ինձ բուժել, բայց…ամեն դեպքում, վախենում եմ…
Քիարա.
-Սերն ավելի կարևոր է, քան վախը, Լուիզա՛, միշտ հիշի՛ր: Սա էլ ի՛մ թևավոր խոսքն է, ես էլ ունեմ թևավոր խոսքեր, բա՛ *(ծիծաղում է):* Բայս Հիսուս մեզ պատվիրում է խոնարհ լինել, իսկ ես… ես պարծենկոտի մեկն եմ և մեղքեր շատ ունեմ: Իսկ այ, դու՛… դու կարո՛ղ ես լինել սրբուհի՛, գիտե՞ս, դու այնքա՜ն դժվարություններ տարար՝ քաջությամբ և հավատքով: Դա սրբության ճանապարհ է, եթե երբեք չընկճվես և միշտ ուրախ լինես, անպայման կհասնե՛ս սրբության: Հիսուս մեզ պատվիրում է միշտ ուրախ լինել և հուսալ, վստահել Աստծուն, և, հավատա՝ ամեն բան լավ կլինի:

Այստեղ գալիս է Քիարայի մայրը և ասում.
Մարիա Թերեզա.
-Քիարա՛, անուշիկս, կհոգնես, արի՛ մի քիչ պառկիր և հանգստացիր, հետո էլի կքայլեք, դու էլ պառկիր մի քիչ , Լուի՛զա:
Քիարա.
-Հետո՛, հետո՛, մամ, մի քիչ էլ այստեղ նստենք և գանք:
Մայրիկը գնում է, նորից նստում նստարանին:
Քիարա.

-Սուրբ Պատարագից հետո կգնաք տուն, այնտեղ շատ տաք է, հյուրասենյակում դրված է ձեր գեղեցիկ տոնածառը, իսկ կողքին՝ Սուրբ Ծննդյան մսուրի պատկերը, ունեք, չէ՞:

Լուիզա.

-Իհա՛րկե, ունենք, գիտե՞ս, այնքան լա՜վն է, ես հինգ տարեկան էի, երբ հայրիկս բերեց Սուրբ Ծննդյան մսուրի պատկերը՝ գեղեցիկ քանդակներով և Հիսուս Մանկան արձանիկով, որը ես սկզբում գիտեի, թե տիկնիկ է և ուզում էի միշտ դնել բարձիս կողքին և քնացնել ինձ հետ միասին: Հիշում եմ, որ երբ շատ խնդրեցի, հայրիկս թույլ տվեց, երբ այդ գիշեր գրկեցի Հիսուս Մանկանը, այնքա՜ն ջերմություն զգացի և այնքա՜ն հանգիստ ու անվախ քնեցի:

Քիարա.

-Որովհետև, ինչպես ասացի, սերն ավելին է, քան վախը *(ուրախ ժպտում է):*
Եվ երբ դու տեսնես քո սիրելի Հիսուս Մանկանը և գրկես ու համբուրես, մայրիկը կբղավի՝ դե ե՜կ, Լուիզա՜, պատրաստե՜նք մեր Սուրբ Ծննդյան սեղանը, և դուք սեղանին կդնենք համեղ ուտելիքներ, թխվածքաբլիթներ, գույնզգույն, անուշահոտ մրգեր, կնստեք բոլորդ միասին և ուրախությամբ կհիշեք այս տարվա բոլոր ուրախությունները և թե ինչպես կարողացաք հաղթահարել դժվարությունները:

Լուիզա.

-Գիտե՞ս, Քիա՛րա, ես հիշեցի Անդերսենի հեքիաթը՝ լուցկիներ վաճառող աղջկա մասին, հիշու՞մ ես: Աղջիկը փողոցում, ցրտին նստած, ամեն մի լուցկուց բոցկլտացող կրակի հետ պատկերացնում էր Սուրբ Ծննդյան սեղանը, ջերմությունը, գրեթե այնպես ինչպես դու քիչ առաջ նկարագրում էիր: Ինձ թվում է, թե ես էլ այդ աղջկա նման կսառեմ և երբեք չեմ տեսնի քո նկարագրած պատկերը:

Քիարա.

-Ես հենց այսո՛ր քեզ համար կնկարեմ այդ պատկերը, որ միշտ նայես ու հիշես, որ այդ օրը գալու է, ա՛յ կտեսնես, հավատա՛:

Քիարան գրկում է Լուիզային, համբուրում է, և երկուսն էլ վեր են կենում ու գնում վարագույրի հետև:

Տեսարան Բ

Բժիշկը և բուժքույրը զրուցում են Քիարայի և Լուիզայի մայրիկների հետ:

Սոֆի (Լուիզայի մայրիկը).

-Բժիշկ, ինչպե՞ս է աղջիկս՝ Լուիզան:

Բժիշկ.

-Լուիզայի վիճակը ծանր է, արյան լեյկոզը հեշտ հաղթահարելի հիվանդություն չէ, նրա օրգանիզմը արդեն բավական հյուծված է, մենք անում ենք ամեն հնարավոր բան, մի քանի օրից՝ մինչև Սուրբ Ծնունդ, հավանաբար, կվերսկսենք քիմիաթերապիայի չորրորդ կուրսը: Դուք լավատես եղե՛ք և աղոթե՛ք, հիմա դա շատ է պետք նրան:

Մարիա Թերեզա (Քիարայի մայրիկը)
-Բժիշկ իսկ ի՞նչ կասեք Քիարայի մասին, կարիք կա՞ քիմիաթերապիայի չորրորդ փուլի:

Բժիշկ.
-Կարծում եմ, այո՛, տիկին Մարիա, մենք Քիարային շատ տանջեցինք, ինքն ահավոր ցավեր ունի, որոնք գիտեմ՝ շատ մեծ զսպվածությամբ է տանում, բայց ստիպված ենք սկսել չորրորդ փուլը: Մենք Քիարայի մոտ ոսկրի քաղցկեղի դիագնոզը հաստատեցինք 1989թ. հուլիսի 19-ին, անցել է 4 ամիս, և արդեն երեք անգամ քիմիական թերապիա է ստացել խեղճ աղջիկը, ես զարմանում եմ, թե ինչպես նա դիմանում այդ ցավերին, գոնե համոզեք, մորֆին ընդունի, ցավերը ահագին կհանգստանան: Նա ձեզ կլսի, կարծում եմ:

Մարիա Թերեզա.
-Օ՜, ոչ, բժիշկ, ցավոք, դուք սխալվում եք, այդ հարցում Քիարան ինձ չի լսում, նրա համար իր տառապանքը Հիսուս Քրիստոսին նմանվելու կարևոր միջոց է, որից նա չի ուզում հրաժարվել: Նա համոզված է, որ իր այս հիվանդությունն Աստծո կողմից իրեն տրված մի հնարավորություն է՝ Հիսուսի նման զոհաբերություն կատարելու՝ մեղավորներին փրկելու համար:

Բժիշկ.
-Հասկանում եմ, բայց բժշկությունը ևս Աստծո պարգև է և պետք է ամեն ինչ անել՝ ցավը մեղմելու համար, սա բացատրե՛ք Քիարային, գուցե, ընդունի:

Մարիա Թերեզա.
-Լավ, կխոսեմ, բժիշկ, բայց անհնար եմ համարում նրան համոզելը, ավելի շուտ ի՛նքը մեզ բոլորիս կհամոզի:

Սոֆի.
-Այո՛, քո Քիարան իսկական հրաշք է, եթե ինքը չլինի ես չգիտեմ, թե իմ Լուիզան որտեղից պետք է ուժ գտնի՝ պայքարելու իր հիվանդության դեմ, Քիարան նրա հույսի և ժպիտների միակ պատճառն է դարձել այս հիվանդանոցում:

Բուժքույր.

-Այո՛, ձեր Քիարան այստեղ շատ հիվանդների է հույս ներշնչում՝ ապագայի հանդեպ, իր ուժեղ կամքով, իր տոկունությամբ, հավատքով: Քիարան արտասովոր աղջիկ է, ես առաջին անգամ եմ հանդիպում այսպիսի ուժեղ կամքով աղջկա:

Բոլորը հեռանում են:

Տեսարան Գ

Քիարան կիսապառկած է, մայրիկը նստած է կողքին, նրանք զրուցում են:

Մարիա Թերեզա.
-Քիարա՛, անուշիկս, գուցե, համաձայնվես, որ բժիշկը քեզ մի քիչ մորֆին ներարկի, ցավերդ կմեղմվեն: Ի վերջո, Աստված մեզ նաև տվել է բժշկությունը՝ որպես օգնություն, որից հրաժարվելը ճիշտ չէ: Առանց այդ էլ շատ ես չարչարվում, Աստված տեսնում և գնահատում է: Ի՞նչ կասես:

Քիարա.
-Մայրի՛կ, միայն մի բան կա, որ այս վիճակում կարող եմ անել՝ տառապանքս առաջարկել Հիսուսին, որովհետև ես ուզում եմ կիսել խաչի վրա Նրա կրած տառապանքները, և ինչքան հնարավոր է, շա՜տ: Եթե ես մորֆին ստանամ, ես ոչինչ չեմ զգա, այդ դեպքում իմ նվերս Հիսուսին գիտակցված չի լինի:

Մարիա Թերեզա.
-Հիսուս, կարծում եմ, չի ուզում, որ դու այլևս տառապես և դիմանաս այդ սարսափելի ցավերին: Չէ՞ որ նա այնքա՜ն սիրում է քեզ, Նա իր կյանքն է տվել քեզ համար:

Քիարա.
-Ճիշտ է, մայրի՛կ, դրա համար էլ ես եմ ուզում եմ ի՛մ տառապանքները նվիրել Իրեն՝ բոլոր մեղավորների համար, ինչպես ինքն արեց մեզ համար: Ես ի՛նքս եմ ուզում դա անել, ես չեմ վախենում այս հիվանդությունից, եթե ունեմ, ուրեմն պետք է այն կրեմ՝ որպես միջոց՝ Հիսուսի համար և մարդկանց համար մի լավ բան անելու նպատակով: Ես ուզում եմ, որ տառապանքս իմաստ ունենա:

Մարիա Թերեզա.
-Այդ դեպքում, Քիարա, գոնե աշխատի՛ր շատ չքայլել, շատ չխոսել Լուիզայի և մյուս հիվանդների հետ, դա քեզ ուժասպառ կանի:

Քիարա.

-Ես հիմա այլևս ոչինչ չունեմ սպառելու, մայրի՛կ, բայց դեռևս ունեմ սիրտ և դրանով մի՛շտ կարող եմ սիրել: Իսկ իմ սերը կարող է դեռ օգնել մարդկանց: Իմ սերը և իմ տառապանքը, որ ես ուզում եմ տալ, ինչպես Հիսուսն է տալիս: Գիտե՞ս մայրիկ, ես Հիսուսին խնդրել եմ, որ Լուիզային բուժի, ես ուզում եմ հատուցում անել նրա փոխարեն, նա այլևս մաքուր կլինի մեղքերից, ես դրանք վերցնում եմ իմ վրա: Ես ուզում եմ, որ Լուիզան տուն վերադառնա, Սուրբ Ծնունդը տոնի իր ընտանիքի հետ, որ ժպտա, այստեղ շատ տխրեց: Ես ամեն ինչ անելու եմ, որ նա ժպտա:

Մտնում է միանձնուհի քույր Լուսիան և փաթաթվում Քիարային, ապա ասում.

Ք. Լուսիա
-Ինչպե՞ս ես Քիարա, մեր բոլոր քույրերն աղոթում են քեզ համար: Հայր Սուրբն այսօրվա Սուրբ Պատարագը մատուցեց՝ քո առողջության համար:

Քիարա.
-Շնորհակա՛լ եմ, իմ սիրելի քույր Լուսիա, որքա՛ն կուզենայի Սուրբ Հաղորդություն ընդունել ամեն առավոտ, ինչպես սովոր էի, երբ կարողանում էի գնալ եկեղեցի՝ Սուրբ Պատարագի: Կարոտել եմ Սուրբ Հաղորդությունը:

Ք. Լուսիա
-Վարդապետը խոստացավ, որ վաղը քեզ համար կբերի Սուրբ Հաղորդություն:

Քիարա.
Դա կլինի այստեղ անցկացրած օրերիցս ամենաերջանիկը: Ի՜նչ լավ է, չէ՞ մայրիկ:

Մարիա Թերեզա.
-Իհա՛րկե, անուշիկս: Քույր Լուսիա՛, ձեզ խնդրում եմ, համոզե՛ք Քիարային, որ ցավազրկող ընդունի, ինձ չի լսում:

Ք. Լուսիա
-Եթե ձեզ չի լսում, ինձ էլ չի լսի, տիկին Մարիա Թերեզա, բայց եկեք նրան հանգիստ թողնենք, ինքը մեզնից լավ գիտի, թե ինչ պետք է անի, որովհետև Հիսուս նրա ամենալավ խորհրդատուն է:

Քիարա.
-Քույր Լուսիա՛, ձեզ մի խնդրանք ունեմ, ձեր քույրերի հետ միասին աղոթեցե՛ք Լուիզա անունով մի հիվանդ աղջկա համար, նա իմ կողքի սենյակում է և շատ ունի ձեր աղոթքների կարիքը: Աղոթեցե՛ք, որ նա Սուրբ Ծնունդը դիմավորի իրենց տանը, ծնողների հետ, խնդրում եմ:

Ք. Լուսիա
-Շատ լավ, սիրո՛վ, Քիարա: Դե, ես պիտի գնամ, ցտեսությո՛ւն աղջիկս:

Ք. Լուսիան համբուրում է Քիարային և դուրս գալիս սենյակից:

Տեսարան Դ

Լուիզան պառկած է, կողքին նստած է մայրը՝ Սոֆին: Հանկարծ ուրախ-ուրախ ներս է մտնում է Քիարան՝ ձեռքին մի նկար, որ իր ձեռքով է նկարել:

Քիարա.
-Լուիզա՛, տե՛ս, ահա՛, քեզ համար եմ նկարել, ինչպես խոստացել էի: Սա դու ես, իսկ սա քո ընկերներն են, սահում եք սահադաշտում, այստեղ մեծ գեղեցիկ լույսերով զարդարված տոնածառն է, վերևում գլորվում է տատիկի դեմքով լուսինը, իսկ այստեղ երևում է եկեղեցին, որտեղ ուր որ է՝ սկսվելու է Սուրբ Ծննդյան Ճրագալույցի Պատարագը: Իսկ դու էլ խոստացի՛ր, որ կնկարես այս իրական պատմության երկրորդ մասը՝ ձեր տունը, թե ինչպես եկեղեցուց վերադառնալուց հետո կնստեք սեղանի շուրջ, տոնածառի և Հիսուս Մանկան մսուրի կողքին, տաքուկ սենյակում և կուրախանաք մինչև ուշ գիշեր: Խոստանու՞մ ես նկարել:

Լուիզա.
-Չգիտեմ, Քիարա, դու այնքա՜ն բարի ես, և նկարն էլ շատ գեղեցիկ ես նկարել: Դու շատ լավ ես նկարում, ես այսպես չեմ կարող:

Քիարա.
-Կարո՛ղ ես, կարո՛ղ ես, ես քեզ կսովորեցնեմ, ես քեզ համար մատիտներ ու թուղթ եմ բերել, որ միասին նկարենք:

Քիարան թուղթը դնում է սեղանին, Լուիզան նստում է սեղանի մոտ, Քիարան սկսում է նկարել:
Քիարա.
-Որտե՞ղ եք ձեր հյուրասենյակում դնելու տոնածառը:
Լուիզա.
-Այ այստե՛ղ, աջ անկյունում:
-Իսկ մսուրը կողքի՞ն, այստե՞ղ: Լավ, նկարենք նաև տոնածառը և մսուրը: Այ ասյպես:
-Իսկ այստեղ կլինի սեղանը, Քիարա, դու ծնողների՞ս էլ կարող ես նկարել:
-Իհա՛րկե, մենք միասին ենք նկարելու, ահա՛, մայրիկիդ կնկարենք հենց այստեղ՝ նրան նայելով:

Սոֆին ծիծաղում է:

Լուիզա.

-Մայրի՛կ, գիտե՞ս, Քիարան ինձ կսովորեցնի նկարել, ինքն ինձ նաև սովորեցրել է նոր աղոթքներ: Եվ ես այլևս շատ չեմ վախենում, առաջվա նման:

Այդ պահին զարմացած և ապշած ներս է մտնում բժիշկը, գրկում Լուիզային, որ ևս զարմացել է ու ասում.

Բժիշկ.

-Լուի՛զա, քո ստուգումների պատասխանները փաստում են, որ դու աղոռջանում ես, եթե այսպես շարունակվի, դու մի քանի օրից այլևս կատարյալ առողջ կլինես: Սա անբացատրելի մի հրաշք է, մենք երբեք չենք տեսել այսպիսի բան, որ ծանր վիճակից այսպես արագ և անսպասելի փոփոխություն լինի: Բժիշկները չեն կարողանում բացատրություն գտնել: Միայն դեղերը չէին կարող այդպիսի կտրուկ դրական փոփոխություն բերել: Ինչ որ մեկը քեզ համար բարեխոսել է Երկնքում, աղջի՛կս:

Լուիզան ապշահար նայում է բժշկին, մայրիկին, որ ուրախությունից լալիս է և գրկում իրեն, ապա հայացքն, ի վերջո, հառում է Քիարային, որ մեծ ուրախությամբ և հանդարտությամբ նայում է իրեն և գրկում:

Սոֆի.

-Անուշի՛կս, Քիարան քեզ ոչ միայն աղոթել ու նկարել սովորեցրեց, այլև իր աղոթքներով օգնեց իրականություն դարձնել Սուրբ Ծննդյան հրաշքը՝ հատուկ քեզ համար: Չեմ կարողանում հավատալ, որ մենք կվերադառնանք տուն, փա՛ռք քեզ Տեր Աստված, շնորհակալ եմ, Քիարա՛: Ես պիտի ամեն օր աղոթեմ Լուիզայի հետ, որ դու էլ շուտով մայրիկիդ ձեռքը բռնած՝ վերադառնաս տուն: Դու կարիք չունես, որ ինչ-որ մեկը քեզ համար նկարի մի հրաշք, այդ հրաշքը քո մեջ է:

Սոֆին և Լուիզան գրկում են Քիարային և համբուրում: Հրեշտակները պարում են, հնչում է «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» երգը:

Վերջ

Տ. Հովսեփ Գալստյան
2019